Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 15 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ-Դիտավան ոռոգման ջրանցքից մինչև Ազառամուտ ջրատարի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան գյուղի դպրոցի կահավորում» ծրագրերը.

Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի», «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի» և «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի» ծրագրերը.

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանակերտում բնակելի տան կառուցում» ծրագիրը.

«Գորիս» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գորիս քաղաքի «Հին Գորիս» բնակատեղիի Սուրբ Աստվածածին (1771թ.) եկեղեցու վերականգնման աշխատանքների շարունակություն» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Ծաղկաշեն, Վարդենուտ և Եղիպատրուշ համայնքներին», «Խաղասարքերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Ձորագլուխ, Եղիպատրուշ և Ապարան համայնքներ», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանավան թաղամասի մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի ու Լուսակունք համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգերի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի խմելու ջրի ավազանի և Շաքի համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի չորս համայնքների մշակույթի տան վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքի աղբավայրերի ցանկապատում» ծրագրերը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: